ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 357-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-81-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետականև համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2024թ. հուլիսի 26-ի N 78-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1. 2024 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 11^{00} -ին հայտարարել անշարժ գույքի վարձակալության կրկնամրցույթ 1լոտով:
Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, Մարց գյուղի կադաստրային քարտեզի 06-071-0107-0048 ծածկագրի 0,503082 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության կրկնամրցույթ 25 տարի ժամկետով:Մեկնարկային գինը սահմանել տարեկան 13000 ՀՀ դրամ, մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%–ի չափով, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարի չափը՝ 10000 դրամ:
2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ,երկաթգծեր,էլեկտրահաղորդակցության,ջրամատակարարման,ջրահեռացման,կապի ցանցեր,գազատարներ,ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում,հնագիտական, պատմամշակութային հուշարձանների
պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը,չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
3. Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների մրցույթային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող կրկնամրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Առավոտ» օրաթերթում,հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. սեպտեմբերի 04
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 358-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԹԻՎ 10 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու , Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 596-Ն որոշմամբ,հիմք ընդունելով Սմբատ Սուրենի Եղինյանի /մուտք 04.09.2024թ. թիվ 602/ դիմումը և համայնքապետարանի առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Թումանյանի համայնքապետարանի կողմից տրամադրված 02.06.2024թ.թիվ 10 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտի առաջատար մասնագետ Ռ.Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. սեպտեմբերի05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 359-Ա

06-045-0060-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հաշվի առնելով <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը,քաղաքացի Սարո Սանասարի Սարիբեկյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝ Որոշում եմ.

1. Թումանյան համայնք, Լորուտ գյուղում գտնվող, 06-045-0060-0006 կադաստրային ծածկագրի գույքի բաժանման արդյունքում առաջացող նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝
1) 0.18999 հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Թումանյան համայնք, գ. Լորուտ, 9-րդ փողոց,32 բնակելի տուն:

2) 0.24870հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Թումանյան համայնք, գ. Լորուտ, 9-րդ փողոց,32/1 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. սեպտեմբերի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 360-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Արաքսյա Խանանի Թումասյանի դիմումը,անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 26072024-06-0015,թիվ 30012024-06-0011 և թիվ 26072013-06-0022 վկայականները և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Արաքսյա Խանանի Թումասյանին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,ք. Թումանյան,Կենտրոնական փողոց 28/2 հողամասը (ծած.06-004-0017-0049) մակերեսի չափը 0.00354 հա, ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան,Կենտրոնական փողոց 28/1 հողամասը (ծած.06-004-0017-0043), մակերեսի չափը 0.00057 հա և ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,ք. Թումանյան,2-րդ մաս 6-րդ փողոց 20 հողամասը (ծած.06-004-0017-0033) մակերեսի չափը 0.0026 հա երեք առանձին միավորների անշարժ գույքերը միավորել:

2.Միավորված 0.00671 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել նոր << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան,Կենտրոնական փողոց 28 հողամաս>> հասցեն:

3.Սույն որոշման 2-րդ կետերով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2024 թ. Սեպտեմբերի 6
ք.Թումանյան